ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

03 Մայիսի 2017 թվականի N 58-Ա

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ և 57-րդ հոդվածներով, հիմք ընդունելով հանքավայրի շրջակա միջավայրի վրա ազդեցության և տեխնիկական անվտանգության՝ փորձաքննությունների դրական եզրակացությունների արժանացած փոփոխված աշխատանքային նախագիծը, հաշվի առնելով՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2014 թվականի փետրվարի 17-ի թիվ 5/33/50396-14 գրությունը և <Արագած պեռլիտ> ԲԲ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի և տեղեկատվության օրենսդրությանը համապատասխանությունը, ընկերության 2017 թվականի մարտի 16-ի թիվ Ա/Պ-15 գրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. <Արագած պեռլիտ> ԲԲ ընկերության Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածի պեռլիտի հանքավայրից արդյունահանում կատարելու համար, 2012 թվականի դեկտեմբերի 5-ին վերաձևակերպմամբ տրամադրված թիվ ՇԱԹՎ-29/348 թույլտվության մեջ կատարել փոփոխություններ՝

1) թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել 24 տարով, սահմանելով մինչև՝ 2041 թվականի մարտի 8-ը:

2) ՀՀ Արագածոտնի մարզի Արագածի պեռլիտի հանքավայրի արդյունահանման փոփոխված նախագծին համապատասխան արդյունահանման ամբողջ ժամկետի համար տրամադրել 11 222. 559 հազար մ^3 մարվող պաշար:

4) հանքի տարեկան արտադրողականությունը՝ 1-10 տարիների համար սահմանել 53070մ^3, 11-24 տարիների համար 636840 մ^3 մարվող պաշար:

2. Ընդերքի գործակալության պետին՝

1) պատրաստել սույն հրամանի 1-ին կետում նշված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածի պեռլիտի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-348 պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր), լեռնահատկացման ԼՎ-348 ակտի փոփոխությունները և ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին դիմումը բավարարելու վերաբերյալ ծանուցել

դիմումատուին և հրավիրել վերջինիս՝ 10-օրյա ժամկետում փոփոխված պայմանագիրն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար.

2) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած.

3) ապահովել համապատասխան գրառումների կատարումն արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. <<Հանրապետական երկրաբանական ֆոնդ >> ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

/ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ